

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են: Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ: «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո, կամ եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ին ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում,
3. «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:



Ձգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, 4-րդ հարկ, 411 սենյակ
Հեռ.՝ (37410) 582322, 582321
Էլ հասցե՝ info@fsm.am
Ֆաքս՝ (37410) 582421
Կայք՝ www.fsm.am





Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել ՀՀ կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ ՀՀ կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկ



Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6
 Հեռ.՝ (37410) 592697
 Էլ հասցե՝ chairman@cba.am
 Ֆաքս՝ (37410) 565496
 Կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:

Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ դեմ կայացված որոշումները: